

## **ՊԱՏԺԻ ԵՎ ԴՐԱ ԽՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԻՐԾ ԿՓԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

### **LՅՈՒԹԱ ՄԵՀՐԱԲՁԱՆ**

Հանցագործությունն ու պատիժը սոցիալ-պատճական երևոյթներ են, ցավոր նաև նարդկության մշտական ողեկիցները նրա գոյության ամենավաղ ժամանակներից մինչև մեր օրերը: Տեղին է հիշել գերմանացի քրեագետ Ֆրանց ֆոն Լիստի հետևյալ միտքը: «Հանցագործությունը հավատեական է, ճիշտ այնպես, ինչպես հիվանդությունն ու մահը»<sup>1</sup>:

Հանցագործությունը, որպես առավել վտանգավոր իրավախախոռում, պահանջում է և հանգեցնում ամենախիստ պատասխանատվության:

Բոլոր ժամանակներում բոլոր պետությունները հանցավոր արարքների դեմ պայքարում կիրառել են բազմատեսակ միջոցներ և ներգործության ձևեր, որոնց շարքում չի կարելի չընդունել պատժի էական դերը: Միաժամանակ պետք է ընդունել և այն իրողությունը, որ պատժի ամենակարևոր խնդրի՝ հանցագործությունների կանխման իմքում միշտ դրվել է օրենքն ընդունողի շահը, քանի որ ցանկացած օրենքը, լինելով իր ժամանակի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրարերությունների արգավիք, ստեղծվում է՝ բավարարելու տվյալ ժամանակաշրջանի իրավական կյանքի պահանջները:

Մճրատ Սպարապետի Դատաստանագրքի արժեքը գերազանցապես պայմանավորված է ոչ միայն երկրի պաշտամության և հզոր պետականություն ունենալուն միտված իրավաստեղծ գործին զինվորագրված Մճրատ Սպարապետի անձով, այլև նրա ժամանակով (1208-1276 թթ.):

Միջնադարում քրեական և քաղաքացիական դատավարությունը էականորեն չի տարբերակվել: Դատավարության կողմի մեղքի առկայության կամ քացակայության ապացուցումը եղել է նոյնական քե՛ քրեական, քե՛ քաղաքացիական գործերով: Իհարկե, եղել է այն ընթանումը, որ մի դեպքում քննության է առնվել կյանքից զրկելու կամ այլ ծանր պատժի, իսկ մյուս դեպքում՝ նյութական վճարի հատուցման խնդիրը, սակայն, կարելի է ասել՝ դրան էական նշանակություն չի տրվել: Բնական է, քննարկվող ժամանակափուլում հասարակությունը դեմք չէր կարող ունենալ այն զիտակցությունը, որ քրեական պատժի խախտումների հետապնդումը և պատասխանատվության կիրառումը համարել ոչ միայն իրավունք, այլև պետության բացառիկ պարտականություն:

Մճրատ Սպարապետի Դատաստանագրքի ուսումնավրությունը ցոյց է տալիս, որ դրանում խիստ փոքրարիվ են (1, 77, 190 հոդվածներ) դատավարությանը վերաբերող նորմները: Այդուհանդերձ, վերջիններիս մեկնարանությունը բույլ է տալիս նկատել, որ ոչ միայն քաղաքացիական, այլև

<sup>1</sup> **Франц фон Лист**, Проблемы преступления. М., 1927, с. 9.

քրեական գործերը հիմնականում հարուցվել են մասնավոր մեղադրանքի հիման վրա: Այդ դատաստանագրքի ընդամենը մի քանի նորմեր են վկայում պետության կողմից քրեական գործ հարուցելու նախաձեռնության մասին (95, 131, 132, 148 հոդվածներ): Խոսքը վերաբերում է ընչափորկի, ծառայի, այրի կնոջ, որք երեխայի նկատմամբ բռնության, կույս աղջկա բռնաբարության հանցավոր արարքներին:

Պետք է նկատել, որ, ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի, մեղադրող-հայցվորի (որի դերում հանդիսանում է եկեղեց տուժողը կամ նրա ներկայացուցիչը) փաստը պարտադիր է եղել և քաղաքացիական, և քրեական գործերի դատաքննության համար: Մեղադրվողը կամ իրավախախտ արարքի մեջ կասկածվող անձը պետք է ներկայացվեր դատարան («... զոր պարտն է՝ ի դարպասն տայ, որ դատէ»)<sup>2</sup>, քանի որ ուս դատավարության ելքն ու ընթացքն իրականացնելու պայմանն էր:

Փաստորեն, իրավախախտին հայտնաբերելը, նրան պատժելն ու ուղղելը ոչ այնքան պետության խնդիրն էր, որքան՝ տուժողի, քանի որ, բացի պետական հանցագործություններից, մնացած դեպքերում տուժողն էր խնդիրը ներկայացնում պետական մարմնին՝ դատարանին («Եթէ ոք մարդոյ իրք տայ ի պահ, ու գողնվի՝ նա բող գողն փնտու...լսէ դատաւորն եւ ըղորդ գիրաւոնք անաշառ այնէ»)<sup>3</sup>:

Այդ մասին է վկայում նաև հայ միջնադարյան իրավունքի պատմության ականավոր մշակ Խ. Սամվելյանի հետևյալ միտքը. «Քրեական գործերով իշխանության մարմիններն իրենք երբեք միջոցներ չեն ձեռնարկել հետապնդելու հանցավորին»<sup>4</sup>: Ակնհայտ է, սակայն, որ պետությունը պետք է առավել ակտիվ դեր ունենա արդարադատության իրականացման գործում:

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի բազմաթիվ նորմերի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ բոլոր իրավախախտումների դեպքում պահանջվել է դիմել (գրավոր կամ բանավոր) դատարան, «Բայց խիստ հաստատուն այն է, որ դատաւորին ձեռընզրով լինի», «....հարկ լինի որ ի դարպաս երթայ ու դարպատվ առնու», «....տուժվի ի դարպսէ»<sup>5</sup>: Դատական գործընթացը սկսվել է դատավորի կողմից գործի նյութերն ուսումնասիրելուց հետո և նրա նշանակած ժամկետում: Դատավարությունն իրականացվել է իրապարակային սկզբունքով, որոշակի փուլերով և կանոններով: Դատավորը և դատավարության կողմերն ունեին իրենց սահմանված տեղը: Դատավորը նատում էր դատավարության կողմերի դիրքից բարձր տեղադրված գահավորակին: Սրա նպատակը ոչ միայն այդ կեցվածքի ուժով ստեղծված վախի մթնոլորտում դատավարության մասնակիցներին ճշմարտությունն ասելուն պարտադրելը և դատավորի առջև ծնկած մեղադրվողի դեմքերը (աչքերը) չտեսնելով արդար դատելն

<sup>2</sup> Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 66-րդ հոդված:

<sup>3</sup> Նոյեմբեր 152-րդ հոդված:

<sup>4</sup> **Խ. Սամվելյան**, Մ. Գոշի Դատաստանագիրը ու հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911, էջ 149:

<sup>5</sup> Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 123, 147, 173 հոդվածներ:

էր, այլև «քարձրյալի» և աշխարհիկ տիրոջ անունից դատավարություն ապահովելը, այսինքն՝ իշխանության իրականացումը:

Դատավարության ընթացակարգը ևս սահմանվել է օրենքով. սկսվել է դատավորի՝ կողմերի հաշտություն կնքելու առաջարկով, որի կայացման դեպքում ձևակերպվել է դա, հակառակ պարագայում սկսվել է դատավարությունը՝ սկզբում հայցվորի (մեղադրող), ապա՝ պատասխանողի (մեղադրվող) ելույթներով, որոնց հաջորդել են վկաների ցուցունքները, այնուհետև՝ ապացույցների հետազոտությունը և որոշման կայացումը:

Դատավարությանը կողմերի մասնակցության իրավունքը հիմնականում սահմանվել է առանց դատական ճառախոսի (դատապաշտպանի): Դատավարությանը կողմերի անձամբ մասնակցության և, որպես կանոն, ներկայացնություն չըույսատրելու տրամաբանության հիմքում Սմբատ Սպարապետը, նաև Միսիքար Գոշը դրել են 2 կարևոր հանգամանք. դատարանում կողմերը պետք է հանդիս գան դեմ հանդիման, ինչպես նաև անձամբ և առանց պաշտպանի, որպեսզի վերջինիս միջոցով չկարողանան հասնել անարդար հաղթանակի:

Այդուհանդերձ, հայոց երկու դատաստանագրքերում էլ որոշ նորմեր վկայում են, որ դատավարության մասնակից է եղել նաև կողմերի շահերի պաշտպան անձը: Ընդ որում, որպես ներկայացնության դատարանում հանդիս են եկել որոշակի անձինք: Հարկ է ընդգծել նաև, որ դատարանում որոշակի անձինք կարող էին ունենալ ներկայացնությունը:

Ինչպես նշել ենք, միջնադարում քրեական և քաղաքացիական դատավարությունները էականորեն չեն տարրերվել: Կիլիկյան Հայաստանում որոշակի տարրերակում է դրվել առանց պաշտպանի մասնակցության դատարբնություններով. քաղաքացիական գործերով երդման իրավունքը տրվել է ոչ թե հայցվորին, այլ պատասխանողին (Սմբատ Սպարապետի Դատաստանագրի 187-րդ հոդված), իսկ քրեական գործերով՝ ոչ թե մեղադրվողին, այլ տուժող-մեղադրողին (Սմբատ Սպարապետի Դատաստանագրի 129-րդ հոդված): Առաջին հայացքից կարևորություն չներկայացնող այս կարգը դատավարական առումով, ըստ Էության, ինչպես վկայում են նշված հոդվածները, ապացույց է հանդիսացել և վճռել գործի ելքը: Ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրի 187-րդ հոդվածի՝ «Եթէ որ զիր իր ի պահ տայ, եւ կամ կոտրի կամ գողնվի՝ նա զայն երդումն ըդորդ երդնու՝ որ ոչ ի տուր է տվել, եւ ոչ իր կամաւր կոտրվել՝ նա չտայ վճար»:

Զննարկվող խնդրի կապակցությամբ հիշենք ֆրանսիական միջնադարյան իրավունքի առաջին տեսաբաններից Ֆիլիպ Բոմանուարին, ով իրավացիորեն ընդգծել է, որ այդ ժամանակաշրջանում «...դատում էին ոչ թե ըստ դիտավորության, այլև ըստ դատարանում ասված խոսքի», հետևաբար՝ դատավարություններն ունեին ձևական բնույթ:

Մեղադրվող-պատասխանողի կողմից տուժողի ներկայացրած մեղադրամին ընդունելը, ինչպես նաև սահմանված կարգով պատասխանել չկարողանալու փաստը դատավարությունն ավարտելու և դատական որոշում կայացնելու հիմք էր: Մեղադրվողի կողմից մեղքը չընդունելու դեպքում

<sup>6</sup> Кутюмы Бовези, гл. 39 (Хрестоматия по истории государства и права зарубежных стран). М., 1984, с. 105-106.

տուժող-մեղադրողը, որպես հայցի նախաձեռնող, պարտավոր էր ապահովել դրա ապացուցումը: Նրա համար նման պարտավորություն սահմանելը, որ միանգամայն անընդունելի է հիմա, նախատեսվել է նաև Կիլիկիայում գործնական կիրառություն ունեցած Անտիոքի ասահզներում: Ավելին, իրավական այդ ակտը ավելի հեռուն է զնացել՝ դատարան դիմելու ու դատական պաշտպանության իրավունքից ողջ կյանքի ընթացքում զրկելով այն հայցվորին (մեղադրող-տուժող), որը չի կարողացել ապացուցել մեղադրվող-պատասխանողի մեղքը (II մասի 7-րդ հոդված):

Դատարանում մեղքի ապացուցման համար երթեմն տեղ է գտել տանջաքննությունը, որոշ դեպքերում էլ՝ երդումը («...երդմամբ փնտուեն», «զիր իրքն ճանչէ երդմամբ»), սակայն որպես հիմնական միջոց կիրառվել է առնվազն երկու վկաների ցուցմունքը («չէ ի իրամայէլ արենքս, ով մեկ վկայի ավտան ի վերայ մարդոյ ասացած», «լսէ դատաւորն յերկուքէն և ի վկայից և ի դրացներուն», «պատեհ է, որ լինի վկայալք», «պիտի տեսնուի և փնտուել վկայալք»<sup>7</sup>):

Վկայի միջոցով հայցի ապացուցման միջոցը, ըստ Էության, փոխվել է դատավարական մրցակցության: Կողմերն ունեցել են նաև վկայի բացարկի իրավունք, իսկ այդ վկան էլ իրավունք է ունեցել դատավարական մրցակցության մեջ մտնելու՝ իրեն նախապես սուտ վկայություն տվող համարելու հմքով: Բացի այդ, դատավարության կողմը կարող էր մրցակցության կանչել նաև մյուս կողմի վկային, անգամ՝ դատավորին:

Դատական գործընթացն ավարտվել է դատական որոշմամբ, որն, ըստ գործի բնույթի, կարող էր իրականացվել անմիջապես (մասնավորապես՝ բանավոր հայցապահանջի դեպքում), ինչպես նաև հետագայում՝ դատավորի հայեցողությամբ:

Միջնադարյան գրեթե բոլոր պետություններում, որպես արդարադատության իրականացման հիմնական ձև, մեծ կիրառություն է ունեցել ինքնադատատանը: Այս հարցում այլ է հայկական օրենքների պահանջը. «....ոչ ունեին իշխանութիւն ձեռամբ իրենց սպանանէ, այլ տան ի դատաւորսն», «նա, որ չունի իրաման ի բագաւորէ, կամ ի դատաւորէ եւ սպանէ, ինք մեռանի յարինացն»<sup>8</sup>:

Ինքնադատատանի իրավունքը հայոց մեջ գործել է բացառիկ դեպքերում: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքով բույլատրվել է առանց դատաստանի սպանել անառակին, հանցանքի վայրում բռնված գողին, «մեծ ճանապարհ» մարդասպանին (29, 92, 93, 163 հոդվածներ):

Միջնադարյան իրավական ադրբուների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք չեն սահմանում պատժի՝ որպես պետական հարկադրանքի կամ զրկանքի դեֆինիցիան կամ գեր փոքր-ինչ ճշգրտված բնորոշումը: Այդ ժամանակաշրջանի իրավագիտակցությամբ «պատիժ» հասկացությունը չափազանց ընդհանրական է և, որպես սանկցիա, ընդունելի՝ ցանկացած խախտման համար: Միջնադարյան հայկական իրավական ադրբուներում ևս մեկնաբանված չեն «զտուգանքն», «սուժվի ի դարպսէ»,

<sup>7</sup> Սմբատ Սպարապետի Դատաստանագրի 129, 135, 152, 190, 198 հոդվածներ:

<sup>8</sup> Նույնի 76, 93 հոդվածներ:

«տուժանք», «ձգուի ի կարգեն», «զրկանքն առնուն», «խրատելն» և այլ սանկցիաներ, տրված չեն պատիժ և իրավաբանական պատասխանատվություն հասկացությունների իրավաբանական բնորոշումները: Այս իրավական ակտերի, այդ թվում՝ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի առանձին նորմերի (66, 143, 164, 166, 169 հոդվածներ) ուսումնասիրությունից կարելի է հանգել այն ընդհանուր հետևողական որ պատիժը կիրառվել է որպես իրավախախտման հետևանք և հատուցում («....եթե ոք սպանանէ, ինքն յայնցեղ մահով մեռանի», «....ոք քաւե ...զոր արար»)՝ ունենալով նաև խախտողին ուղղելու, այլ խախտումները կանխելու նպատակ («խրատեն զիրենք ի դրան, ոք այլքն վախեն», «ոք եւ այլքն խրատին ի զգաստութիւն») և տուժողին պատճառված վնասները հատուցելու խնդիր («զբեղզին ու զբժշկերոյն յայնոր վերայ դնեն»):

Նշված իրավանորմերը միաժամանակ վկայում են մարդկության գոյության ողջ ընթացքում իր մշտական կիրառությունը պարտադրած *jus talionis*-ի և պատիժի իրականացման իրապարակային բնույթի մասին:

Կիլիկիայի պատժական քաղաքականությանը բնորոշ են նաև դասակարգային բնույթը և անհավասար պատիժների սկզբունքը: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի քրեական կանոնագրքի մեծամասնությունը «արդարացումն» է ավատադիրական ժամանակաշրջանի՝ «որքան ցածր է հանցագործն իր սոցիալական դրությամբ, այնքան բարձր ու խիստ է պատիժը» սկզբունքի<sup>9</sup>:

Դատաստանագրքի քրեական բազմաթիվ նորմեր էլ միևնույն հանցավոր արարքի համար տարբեր պատիժներ են նախատեսել կանանց և տղամարդկանց, (39, 93, 98 հոդվածներ), ինչպես նաև քրիստոնյա և ոչ քրիստոնյա անձանց (1, 5, 19, 28, 29, 66, 148, 156, 182 հոդվածներ) նկատմամբ: Առանձին դեպքերում էլ նշված դատաստանագիրքը (50, 91, 156, 161 հոդվածներ) և Զինվորական օրենքը (*Բ*, *ԺՇ*, *Լ*, *ՀԴ* հոդվածներ) դատավորին են վերապահել պատիժը մեղմելու իրավունքը: Հավելենք, որ այդ իրավական ակտերը վկայում են Կիլիկիայում կիրառություն ունեցած խիստ պատիժների փաստի մասին: Մասնավորապես՝ խիստ պատիժներ են սահմանվել կրկնահանցագործի, նախնական հանցավոր համաձայնությամբ հանցանք կատարածի և հարբած հանցագործի նկատմամբ: Վերջինիս կապակցությամբ ուշադրության է արժանի Սմբատ Սպարապետի հետևյալ կարծիքը. «....զայն երկու պիտի դատել՝ մեկ վասն արբեցողութեան, եւ երկու հետ՝ վասն վնասուն, որ գործեց»<sup>10</sup>:

Կիլիկիայի պատժական քաղաքականությունը, որպես իրավական առօրյայի ճշնարիտ և արդար ապահովման անհրաժեշտություն և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունք, կիրառել է հանցավոր արարքի և դրա պատասխանատվության հանարժեքությունը՝ «մահապարտ է. փոխարեն մեոցի», և կատարված հանցագործության ու դրան հետևող պատժի հավասարակշռության տրամարանությունը, որը դրսեորվել է հանցագործության կատարման ձևի ու հանգամանքների

<sup>9</sup> Ա. Թողմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1962, էջ 449:

<sup>10</sup> Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 161-րդ հոդված:

(օրյեկտիվ կողմի) և պատժի ներգործության ձևի ու եղանակների համանանության մեջ՝ «եթե ոք կրակ ճգե, զինքն այրեն», «զնոյն պարտին արրուցանել անողացն»<sup>11</sup>:

Կիլիկիայի պատժական քաղաքականության հիմքում (եզակի բացառություններով<sup>12</sup>) գործել է տվյալ ժամանակաշրջանի համար չափազանց առաջադիմական երկու սկզբունք. հանցավորի անձնական պատասխանատվություն («իրաքանչիր ոք ի մեղս իրում»<sup>13</sup>) և պատասխանատվությունն ըստ հաստատված մեղքի («փնտոել եւ ճշմարտել, ապա դատել ըստ արժանեացն»<sup>14</sup>):

Ակնհայտ է, որ Կիլիկիայի քրեակրավական նորմերը քրեական պատասխանատվության նախապայման են ընդունել հանցավորի ապացուցված մեղքը և թեպետ չեն սահմանել ոչ մեղքի բնորոշումը, ոչ էլ դրա ձևերի իրավաբանական որակումը, սակայն առանձին հանցավոր արարքների համար պատիժներ սահմանելիս տարբերակել են դիտավորությունը («կամայ»), անզգուշությունը («ակամայ») և խառը («ի կամայն եւ ոչ կամայն ի խառն») մեղքը, երբեմն էլ դա հիմք ընդունել ընդդատության խնդրի լուծման համար՝ «զկամաւ սպանութիւններն աշխարական պարոնայք գիտնան, եւ զակամայն եկեղեցին»<sup>15</sup>:

Կիլիկիայում կիրառություն գտած պատիժներն, ըստ դրանք սահմանող նորմերի, կարող ենք դասակարգել հինգ տեսակների՝ մահապատիժ, մարմնական պատիժներ, ազատությունից և իրավունքներից զրկող և դրանք սահմանափակող պատիժներ, գույքային պատիժներ և եկեղեցական պատիժներ: Ըստ նշանակման կարգի և իրավաբանական նշանակության՝ պատիժները բաժանվում են 3 խմբի՝ հիմնական, լրացուցիչ և խառը:

Հակիրճ անդրադառնանք նշված պատժատեսակների ընդհանրական բնուրագրմանը:

Կիլիկիայի քրեակրավական նորմերով մահապատիժ (զիստում, քարկոնում, կախաղան, կենդանի թաղում, այրում, գազանների կերակուր դարձնելը, խեղդամահ անելը...) կիրառվել է քազավորի ու պետության դեմ դավադրություն կազմակերպելու, զավակի կողմից ծնողի վրա ձեռք բարձրացնելու, սպանության, կաշառքի, գերեզմանի հողադրամ առնելու, պատարագը «ծախելու», գողության և դրա փորձի, առևանգման, թերզը թշնամուն հանձնելու համար (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 8, 29, 47, 48, 64, 70, 93, 107, 122, 151, 164, 171, 179 հոդվածներ):

Կիլիկիայում արգելվել է մահապատիժը անշափահասների նկատմամբ (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 122, 182 հոդվածներ): Մարմնական պատիժները (մտրակահարում, զանահարում, ծեծ, խարանում, քարկոնում, ոտք(եր)ը, ձեռք(եր)ը, քիթը կտրելը, աչք(եր)ը հանելը և այլն) որպես տուժողին պատճառված մարմնական վնասվածքների և հաշմու-

<sup>11</sup> Նոյնի 151, 166, 185 հոդվածներ:

<sup>12</sup> Նոյնի 1, 10, 72 հոդվածներ:

<sup>13</sup> Նոյնի 2, 124 հոդվածներ:

<sup>14</sup> Նոյնի 179 -րդ հոդված:

<sup>15</sup> Նոյնի 180-182 հոդվածներ:

թյան համարմեք պատիժ-հատուցում (թալիոն), նաև որպես հանցագործին անարգելու և ուղղելու, իսկ այլոց՝ նախազգուշացնելու միջոց (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 94, 95, 98, 106 հոդվածներ):

Ազատությունից և իրավունքից զրկող ու սահմանափակող պատիժ ամենամեծ կիրառություն ունեցած տեսակը ազատազրկումն է, որը, որպես հիմնական պատիժ, կիրառվել է բանտարկության ձևով և ունեցել է վտանգավոր հանցագործին մեկուսացնելու նպատակ, առանձին դեպքերում էլ եղել է նախնական կալանջի միջոց: Կիլիկիայի քրեական իրավունքի արյուրները<sup>16</sup> վկայում են, որ ազատազրկումն իրականացվել է ցմահ («ի զնդանն կենայ ու մեռնի») և որոշակի ժամկետով («ի զնդանն պահեն ըստ զարկուցն»)<sup>17</sup>:

Իրավունքներից զրկող պատժատեսակներից են եկեղեցուց վտարումը, կոչումից (զինվորական, եկեղեցական) զրկումը, պաշտոնանկությունը (դատավորի) աքսորը, արտաքսումը: Վերջինս իրականացվել է երկրի ներսում և երկրի դուրս (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 109, 111, 163, 200 հոդվածներ):

Կիլիկիայի քրեականավական նորմերով լայն կիրառություն են ունեցել գույքային պատիժները, իսկ դրանցից առավել մեծ կիրառություն՝ տուգանքն ու գույքի բռնագրավումը: Կիրավել են նաև պատճառված վնասների հատուցումը, ժառանգությունից զրկումը և փրկագինը:

Գույքային պատժատեսակներին, բացի երկրնտրանքի միջոց լինելուց, բնորոշ է կիրառման երկու առանձնահատկություն: Գույքային պատիժները թեև սահմանվել են որպես տուժողի վնասի հատուցում, սակայն հիմնականում հարստացրել են պետական գանձարան:

Նշենք նաև, որ քրեականավական մի նորմով (ծեծի, մարմնական վնասվածք պատճառելու համար) հաճախ նախատեսվել է գույքային երկու, անգամ երեք պատժատեսակ՝ դրամատուգանք պետության և դատարանի օգտին, բժշկական ծախսերի բռնագանձում և պատճառված այլ վնասների հատուցում (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 128, 130, 141, 148, 150, 155, 158, 167, 169, 170, 175, 178, 182, 183, 186, 187, 189, 195, 200, 201, 202, հոդվածներ):

Հավատքի ու քարոյականության դեմ ուղղված հանցագործությունների համար որպես «հոգու մաքրման և մեղքի քավության» միջոց, սահմանվել են ապաշխարանքը, բանադրանքը, եկեղեցուց վտարումը, ծիսակատարությաններից զրկումը, առանց ծիսակատարության քաղումը, քաղումն արգելելը:

Կիլիկիայի քրեականավական նորմերով (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 95, 128, 163, 174, 178, 180, 181, 187, 202, Զինվորական օրենքի ԾԵ հոդվածներ) սահմանվել են նաև պատիժ ազատելու հիմքերը, այն է՝ ներսում, արարքը կատարած անձի մեջի բացակայությունը, պատահարը, տուժողի կողմից պահանջ չներկայացնելը և արարքի հանցա-

<sup>16</sup> ա) Նույնի 22, 49, 86, 156, 161, 165, 172, 179, 185, 200 հոդվածներ:

բ) Անտիրքի ասականքների II մասի 9-րդ հոդված:

զ) Զինվորական օրենսգրքի ԺՂ հոդված:

<sup>17</sup> Նույնի 165-րդ հոդված:

Վորությունը բացառող հանգամանքները՝ հոգերանական հարկադրանքը, անհրաժեշտ պաշտպանությունը, ծայրահեղ անհրաժեշտություն:

Կիլիկիայի պատժական քաղաքականությունը նպատակ ուներ ամրապնդելու անկախ պետության արտաքին անվտանգությունը, ապահովելու անուր իրավակարգ և օրինականություն, զարգացած մշակույթ և հզոր տնտեսություն:

**ЛЮБА МЕГРАБЯН – *Проблема наказания и виды его осуществления в Киликийском Армянском государстве.***- Проблема наказания в Киликийском Армянском государстве представлена по нормам Судебника Смбата Спарапета.

В статье выделены виды наказания. Так же обсуждались вопросы судопроизводства и правосудия Килийской Армении.

**LUBA MEGRABYAN – *The issue of punishment and ways of its realization Cilician Armenia.***- The core issues of the punishment policy in Cilician Armenia were presented in the Codes of Smbat Constable. The forms of punishment were differentiated. The principles of the implementation of punishment are shortly described. A special attention in the article is paid to the implementation of the court process justice.